ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5.1.2-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հունիսի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաջյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

• «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրի կատարման վերաբերյալ

***Նշվեց, որ***

«Կավկասուս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրի Հավելված 1-ում «Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ առնվազն 1 հանդիպում Երևանում և ՀՀ մարզերում՝ համաձայն սույն Պայմանագրի հավելված 1.1-ի 1-4 կետերով նախատեսված միջոցառումների ապահովում» միջոցառման իրականացման վերջնաժամկետ սահմանվել է 2025 թվականի մայիս-հուլիսը, սակայն հաշվի առնելով, որ Զբոսաշրջության կոմիտեի կողմից մինչև 2025 թվականի հուլիսի 25-ը դոնոր կազմակերպությունների հետ չի հաջողվում կազմակերպել միջոցառումը՝ նշված ժամկետներում վերջիններիս անհասանելիության և հիմնական գործընկերների մասնակցության անհնարինության պատճառով, ուստի անհրաժեշտություն է առաջանում հետաձգել միջոցառման կազմակերպումը՝ պատվիրումը Ընկերությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկվեց հետաձգել նշված միջոցառման իրականացումը՝ հետագայում հստակեցնելով միջոցառման իրականացման ժամկետները:

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. «Կավկասուս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրի Հավելված 1-ով «Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ առնվազն 1 հանդիպում Երևանում և ՀՀ մարզերում՝ համաձայն սույն Պայմանագրի հավելված 1.1-ի 1-4 կետերով նախատեսված միջոցառումների ապահովում» միջոցառման իրականացման վերջնաժամկետը սահմանված 2025 թվականի մայիս-հուլիսից տեղափոխել մինչև լրացուցիչ հաստատված ժամկետների նախատեսում:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____